ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

ի պատասխան Ձեր 27.11.2024թ. հ. 396-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Աջափնյակ վարչական շրջանի թիվ 40 և 42 մանկապարտեզներն ընդգրկված են ՀՀ կառավարության և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված վարկային համաձայնագրով Երևանի Էներգաարդյունավետության ծրագրի 2-րդ փուլով (Ծրագիր) արդիականացման ենթակա հանրային շենքերի ցանկում: Ներկայումս մշակվում է թիվ 40 մսուր-մանկապարտեզի քանդման և նորի կառուցման, իսկ թիվ 42 մսուր-մանկապարտեզի՝ վերակառուցման և սեյսմիկ վերազինման նախագծման տեխնիկական առաջադրանքը:

Տեխնիկական առաջադրանքի մշակմանը կհաջորդի նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման ու պատրաստման փուլը: Նախագծերի փաթեթների ընթացակարգային հաստատումները ստանալուց հետո միայն հնարավոր կլինի պատվիրել շինարարական աշխատանքներ:

Ըստ համաձայնագրի՝ Ծրագիրը գործառնական իրագործման փուլ է մտել ս.թ. մայիսին, իսկ ավարտ սահմանված է 2029 թվականի հունիս ամիսը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ